ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 58-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 4-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ ենթակետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ուժը կորցրած ճանաչել 25-րդ կետի 1-ին, 8-րդ, 26-րդ կետի 1-4-րդ, 6-9-րդ, 27-րդ կետի 3-րդ և 28-րդ կետի 2-րդ ենթակետերը,

2) 25-րդ կետի 3-րդ ենթակետում «հասարակական անվտանգության ապահովման» բառերը փոխարինել «համայնքային ոստիկանության» բառերով:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Ա.ՍԱՐԳՍՅԱՆ**

«13»_____08_____ 2024թ

ք.Երևան